

Կ-1134⁷-12.12.2016-SՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-79 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ ապրանքների քանակը» բառերից առաջ լրացնել «, բացառությամբ ծխախոտի արտադրանքի, որի մասով ակցիզային հարկով հարկման բազա է համարվում ծխախոտի արտադրանքի տուփի վրա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աղյուսակում «1000 հատ» բառերը փոխարինել «ծխախոտի արտադրանքի տուփի վրա մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կամ 1000 հատ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածը՝

1) 1.1-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած՝ ակցիզային դրոշմանիշի ձեռք բերման հայտ Ձև 1 (այսուհետ՝ հայտ Ձև 1):»,

2) 1.2-րդ մասում «դիմումը» բառը փոխարինել «հայտ Ձև 1-ը» բառերով,

3) 10-րդ մասի «ա» կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի դիմում՝ ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար» բառերը փոխարինել «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ

հավելվածով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած՝ ակցիզային դրոշմանիշի ձեռք բերման հայտ Ձև 2 (այսուհետ՝ հայտ Ձև 2):» բառերով,

4) 10-րդ մասի «գ» կետում և 11-րդ մասի առաջին, երրորդ և չորրորդ պարբերություններում «դիմում» բառը փոխարինել «հայտ Ձև 2» բառերով՝ համապատասխան հոլովածներով,

5) լրացնել 14-րդ և 15-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14. Ակցիզային դրոշմանիշեր ստացած անձինք մինչև ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների իրացումն էլեկտրոնային եղանակով կատարում են գրանցումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով ճշգրտումներ են կատարում այդ գրանցումներում: Սույն մասում նշված անձինք էլեկտրոնային եղանակով գրանցումներ չեն կատարում, եթե գրանցման ենթակա բոլոր տվյալները (բացառությամբ տրամադրվելիք դրոշմանիշերի սերիաների ու հերթական համարների) նշում են հայտում:

Մինչև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցվում են պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը), քանակությունը և համապատասխան դրոշմանիշերի սերիաներն ու հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով): Մինչև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարումը չի դիտվում որպես էլեկտրոնային գրանցումներում կամ դրոշմանիշերի ձեռք բերման հայտում նշված ապրանքների իրացում:

15. Դրոշմանիշի վրա պետք է անգնեն աչքով տեսանելի նշված լինեն (կամ դրոշմանիշը պետք է հնարավորություն ընձեռի Apple iOS 6, Android 4, Windows Phone 8, ինչպես նաև համարժեք կամ առավել բարձր օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային շարժական սարքի (բջջային հեռախոս, պլանշետ և այլն) միջոցով տեսանելի դարձնել) ապրանքն արտադրողի կամ ներմուծողի անվանումը, բնակության կամ գտնվելու վայր, հարկ վճարողի հաշվառման համարը, ապրանքի տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), ապրանքի տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը):»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային մարմնում առկա՝ չտեղաբաշխված ակցիզային դրոշմանիշերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կարող են հարկ վճարողներին տրամադրվել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգով և դրոշմավորման նպատակով կարող են օգտագործվել ինչպես մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող, այնպես էլ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող կարգով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին», «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին», «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների և դրանց հիման վրա նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը և կատարված փոփոխությունները
«Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյան	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5) մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով և դեպքերում հարկային մարմին ճշտված կամ առաջին անգամ ներկայացվող հարկային հաշվարկներ ներկայացրած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա:»:	Ընդունելի է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյան	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 7. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետում նշված անձինք ազատվում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով և դեպքերում հարկային մարմին ներկայացված ճշտված կամ առաջին անգամ ներկայացվող հաշվարկներով առաջացած հարկի լրացուցիչ գումարների նկատմամբ հաշվարկվող և վճարման ենթակա տույժերի և տուգանքների վճարումից, եթե այդ ժամանակաշրջանների համար ճշտված հաշվարկը ներկայացվում և հաշվարկված հարկերի գումարների վճարումը կատարվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում:»:	Ընդունելի է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյան	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «դ» ենթակետերին համապատասխան ապրանքի մատակարարում համարվող գործարքներ իրականացրած՝ մինչև այդ օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն կետով սահմանված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձանց վրա.»:	Կառուցապատման գործունեությունը համարվում է ձեռնարկատիրական գործունեություն: Այս առումով, ներկայացված առաջարկության ընդունման դեպքում անհավասար պայմաններ կձևավորվեն նույն ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնող՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող կառուցապատող ֆիզիկական անձանց և այլ տնտեսավարող սուբյեկտների միջև:
ՀՀ կառավարություն	Առաջարկվում է հարկային համաներումը տարածել նաև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն, հաշվարկված	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	Եկամտային հարկի գծով հաշվարկված և չվճարված տույժերի և տուգանքների վրա:	
«Հարկային հաշվեպնդային չհարկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյան	Առաջարկվում է նախագծում սահմանել դրույթ, համաձայն որի ավտոմատ կերպով լուծարվող կազմակերպություններին ծանուցելու կառուցակարգ կներդրվի:	Ընդունելի է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
ՀՀ կառավարություն	Հստակեցման նպատակով առաջարկվում է նախագծում նախատեսել տեղական արտադրության և ներմուծվող ապրանքների ակցիզային դրոշմանիշերի ձեռք բերման համար առանձին հայտի ձևեր, ինչպես նաև կարգավորել նոր ակցիզային դրոշմանիշերի կիրառության հետ կապված անցումային հարաբերությունները:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: